



**VISA**



**ArCa**

ԿՆԱՐԱՅԻՆ ՔԱՐՏԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ



# 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուժի մեջ է 27.07.2023-ից

1

**1.1.** Քարտապանը, ստորագրելով վճարային քարտի դիմումը, «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Բանկ) ներկայացնում է պայմանագրի կնքման առաջարկ (օֆերտա): Բանկը Քարտապանի առաջարկն ընդունելու դեպքում ստորագրում է վճարային քարտի դիմումը (ակցեպտ), ինչի արդյունքում Քարտապանի և Բանկի միջև կնքված վճարային քարտի թողարկման և սպասարկման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) համարվում է կնքված: Սույն պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

**1.2.** Պայմանագրով Բանկը պարտավորվում է Քարտապանի համար բացել քարտային հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ), Քարտապանին տրամադրել վճարային քարտ (այսուհետ՝ Քարտ), ընդունել և Քարտապանի հաշվի վրա մուտքագրել մուտք եղող դրամական միջոցները, կատարել հաշվից փոխանցումներ կատարելու, համապատասխան գումարներ տալու և հաշվով այլ գործառնություններ իրականացնելու վերաբերյալ Քարտապանի կարգադրությունները, եթե այլ բան սահմանված չէ Բանկի Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 07.06.2019թ.-ին հաստատված Վճարային քարտերի տրամադրման և սպասարկման սակագնի՝ TC 01-05, տվյալ պահին գործող խմբագրությամբ (հրապարակվում է Բանկի ինտերնետային կայքում՝ [www.acba.am](http://www.acba.am)) (այսուհետ՝ Սակագներ), իսկ Քարտապանը պարտավորվում է վճարել Բանկին մատուցված ծառայությունների համար՝ Սակագներով սահմանված կարգով:



## 2 ՀԱՇՎՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հաշվով կարող են իրականացվել ինչպես կանխիկ, այնպես էլ անկանխիկ գործառնություններ:

2.2. Հաշվով իրականացվող գործառնություններն են.

2.2.1. POS տերմինալի միջոցով վճարում,

2.2.2. քարտի տվյալների ներկայացմամբ վճարում,

2.2.3. ինտերնետի միջոցով ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար վճարում,

2.2.4. կանխիկ միջոցների ստացում բանկոմատներից և կանխիկի տրամադրման կետերից,

2.2.5. բանկոմատների և կանխիկի ընդունման կետերի միջոցով կանխիկ գումարի մուտքագրում քարտին,

2.2.6. ՀՀ տարածքում առցանց հարթակների, «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի և բանկոմատի միջոցով քարտից քարտ փոխանցում կամ վճարում,

2.2.7. էլեկտրոնային դրամապանակների միջոցով վճարում,

2.2.8. օրենքով և Բանկի ներքին իրավական ակտերով չարգելված այլ գործառնություններ:



## 3 ՀԱՇՎՈՎ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

**3.1.** Հաշվով գործառնություններն իրականացվում են Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի (Արմենիան Քարդ, Visa, Mastercard) կանոններով սահմանված կարգով:

**3.2.** Հաշվով գործառնություններն իրականացվում են Բանկի կողմից Քարտապանին տրամադրված անձնականացված վճարային գործիք հանդիսացող վճարային քարտով (այսուհետ՝ Քարտ): Ընդ որում, այդպիսիք կարող են լինել Բանկի կողմից թողարկված ArCa Classic, ArCa Transfer, ArCa Credit, ArCa Farmer, ArCa «ՄԻՐ», ACBA Federation, Visa Electron, Visa Classic, Visa Student, Visa «Բարերար», Mastercard Standard, Mastercard UEFA Champions League, Visa Gold, Mastercard Gold և Visa Signature տեսակի վճարային քարտերից որևիցե մեկը:

**3.3.** Քարտի վրա նշված են Քարտապանի անունը, ազգանունը, Բանկի անվանումը, վճարային համակարգի ապրանքանշանը, որին պատկանում է Քարտը, Քարտապանի ստորագրությունը, Քարտի համարը, Քարտի գործողության ժամկետը, Քարտի իսկությունը ստուգող կոդը, Քարտի արժույթը և այլն:

**3.4.** Քարտը հանդիսանում է Բանկի սեփականությունը և պետք է հետ վերադարձվի Բանկ հետևյալ դեպքերում՝

3.4.1. Բանկի պահանջով,

3.4.2. Քարտի գործողության ժամկետը լրանալու դեպքում,

3.4.3. Քարտը վնասվելու դեպքում,



3.4.4. Պայմանագիրը լուծվելու դեպքում,

3.4.5. Պայմանագիրն անվավեր ճանաչվելու դեպքում:

**3.5.** Քարտի ՊԻՆ կոդը տրամադրվում է Քարտապանին՝ Քարտը պատվիրելիս վերջինիս կողմից ընտրված հետևյալ տարբերակներից որևէ մեկով.

3.5.1. թղթային, որի դեպքում ՊԻՆ կոդը տրամադրվում է փակ ծրարի մեջ,

3.5.2. SMS հաղորդագրության միջոցով, որի դեպքում Քարտապանի՝ SMS հաղորդագրության ստացման համար Բանկում գրանցված հեռախոսահամարին ուղարկվում է մեկանգամյա օգտագործման վեցանիշ կոդ, որն օգտագործվում է բանկոմատի միջոցով նոր ՊԻՆ կոդի սահմանման համար:

Վերը նշված տարբերակներից որևէ մեկով սահմանված ՊԻՆ կոդը մոռանալու դեպքում Քարտատիրոջ դիմումի հիման վրա Քարտատիրոջը SMS հաղորդագրության միջոցով ուղարկվում է մեկանգամյա օգտագործման վեցանիշ կոդ, որն օգտագործվում է բանկոմատի միջոցով նոր ՊԻՆ կոդի սահմանման համար:

**3.6.** Քարտապանի դիմումի հիման վրա Քարտապանին տրամադրվում է կից քարտ (միևնույն Չաշվին կցված նույն վճարային համակարգի և նույն տեսակի Քարտ՝ այլ անձի անունով), ինչպես նաև՝ լրացուցիչ քարտ (միևնույն Չաշվին կցված այլ վճարային համակարգի Քարտ՝ Քարտապանի անունով): Նշված քարտերով կատարված գործառնություններն իրականացվում են Պայմանագրով և Քարտը սպասարկող վճարային համակարգի կանոններով սահմանված կարգով, որոնց համար պատասխանատվություն է կրում Քարտապանը:

**3.7.** Բանկը սահմանափակում է Քարտով մեկ օրվա ընթացքում կանխիկի ստացման գործառնությունների քանակը և առավելագույն



գումարը, մեկ օրվա ընթացքում վճարային գործառնությունների առավելագույն գումարը, արտարժութային քարտերի դեպքում՝ նաև քարտից քարտ փոխանցումների ստացման առավելագույն գումարը, իսկ կից քարտերի դեպքում կարող է սահմանափակել նաև մեկ ամսվա ընթացքում կանխիկի ստացման ու վճարային գործառնությունների առավելագույն գումարը, որոնք կարող են Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված չափով փոփոխվել՝ Քարտապանի կողմից Բանկ դիմելու՝ կամ «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով: Ընդ որում, կից քարտերի ամսական սահմանաչափերը և արտարժութային քարտերի դեպքում՝ քարտից քարտ փոխանցումների ստացման առավելագույն գումարի սահմանաչափը կարող են փոփոխվել բացառապես Քարտապանի կողմից Բանկ այցելելու դեպքում:

**3.8.** Հաշվին մուտքագրված դրամական միջոցները կարող են օգտագործվել ամենաուշը սկսած հաջորդ աշխատանքային օրվա ժամը 18:00-ից:

**3.9.** Քարտապանի դիմումի համաձայն Քարտի գործողության դադարեցման, Քարտի կորստի, վնասման, ՊԻՆ կոդը մոռանալու կամ այլ դեպքերում Հաշվին առկա սեփական միջոցների վճարումը կատարվում է Բանկի դրամարկղից կամ այլ բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով՝ Սակագների համաձայն:

**3.10.** Պայմանների 2.2 կետով սահմանված գործառնությունները Բանկի կողմից ձևակերպվում են «Արմենիան Քարդ» ՓԲԸ պրոցեսինգային կենտրոնի (այսուհետ՝ Պրոցեսինգային կենտրոն) կողմից այդ գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը Բանկ ուղարկելուց հետո առավելագույնը չորս աշխատանքային օրվա ընթացքում:

**3.11.** Քարտապանի բջջային հեռախոսահամարի կիրառման միջոցով Քարտապանի կողմից ստացվող դրամական միջոցները մուտքագրվում են Բանկի կողմից միակողմանիորեն որոշված Քարտապանին պատկանող որևէ քարտի, որը Քարտապանի կողմից



ցանկացած ժամանակ կարող է փոփոխվել «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով:

**3.12.** Բանկն իրավունք ունի առանց Քարտապանի համաձայնության ուղղել քարտային հաշվով գործառնություններ իրականացնելիս իր կողմից թույլ տրված, այդ թվում՝ ծրագրային սխալները:



## 4 ԹՈՔԵՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- 4.1. Բանկի կողմից թողարկված Visa և Mastercard վճարային համակարգերի քարտերով գործառնությունները հնարավոր է իրականացնել նաև դրանց թվային համարժեքների (այսուհետ՝ Թոքենի) միջոցով:
- 4.2. Թոքենների ստեղծումը հնարավոր է իրականացնել «Apple Wallet» և/կամ «Google Wallet» դրամապանակների միջոցով:
- 4.3. Թոքեններով վճարման և կանխիկացման գործառնություններ հնարավոր է կատարել համապատասխանաբար այն առևտրի/ սպասարկման կետերում և բանկոմատներում, որոնք սպասարկում են առանց հպման քարտեր:
- 4.4. Թոքեններով կատարված գործառնությունները հավասարազոր են քարտով կատարված գործառնություններին:
- 4.5. Թոքենների ստեղծման գործընթացում քարտապանի քարտի տվյալների անվտանգությունը երաշխավորված է Visa և Mastercard վճարային համակարգերի կողմից:
- 4.6. Բջջային հեռախոսը կորցնելու դեպքում Թոքենի բլոկավորման նպատակով անհրաժեշտ է անհապաղ կապ հաստատել Բանկի հետ:
- 4.7. Բոլոր այն դեպքերում, երբ քարտը բլոկավորվում է այնպիսի պատճառով, որը չի սահմանափակում քարտային հաշվին առկա միջոցների օգտագործման հնարավորությունը, ապա գործում են հետևյալ պայմանները.
- 4.7.1. բլոկավորված քարտի համար հնարավոր չէ ստեղծել նոր Թոքեն:
  - 4.7.2. բլոկավորված քարտին նախկինում կցված Թոքենները չեն բլոկավորվում:
  - 4.7.3. բլոկավորված քարտին կցված Թոքեններով հնարավոր է իրականացնել գործառնություններ:



## 5 ՀԱՇՎԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**5.1.** Հաշվի սպասարկման պայմանները, այդ թվում՝ Հաշվի բացման, Քարտի տրամադրման, Հաշվի սպասարկման և Քարտի փոխարինման միջնորդավճարների չափերը, Հաշվին առկա դրամական միջոցների նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքի չափը, կից քարտերի սպասարկման պայմանները և այլ պայմաններ սահմանվում են Սակագներով, եթե Բանկի և Քարտապանի միջև այլ համաձայնություն չի կայացվել: Նախքան Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելը Քարտապանը պարտավոր է ծանոթանալ Սակագներին, որոնք հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում՝ [www.acba.am](http://www.acba.am), և տեղադրված են Բանկի Կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի հաճախորդների սպասարկման սրահներում:

**5.2.** Բանկի կողմից իրականացվող գործառնությունների Սակագները առանց Քարտապանի հետ համաձայնեցվելու կարող են միակողմանիորեն փոփոխվել:

**5.3.** Յուրաքանչյուր գործառնություն կատարելիս և Բանկի համապատասխան ծառայությունից օգտվելիս Բանկն իր ծառայությունների համար վճարներն իրավունք ունի գանձել հաշվում եղած միջոցներից, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում՝ Քարտապանի այլ բանկային հաշիվներից:

**5.4.** Հաշվի սպասարկման միջնորդավճարը սահմանվում է Սակագներով: Այն Քարտերի դեպքում, որոնց կցված չէ վարկային գիծ, Քարտապանը Քարտի ստացման օրը պետք է իր Հաշվին վճարի Քարտի առաջին տարվա կամ անսվա սպասարկման միջնորդավճարը: Այն Քարտերի դեպքում, որոնց կցված է վարկային գիծ, Քարտի առաջին տարվա կամ անսվա սպասարկման միջնորդա-



վճարը գանձվում է վարկային գծի ակտիվացման օրը՝ վարկային գծի միջոցների հաշվին, իսկ վերջինիս անբավարարության դեպքում սպասարկման միջնորդավճարի գումարը ձևակերպվում է որպես գերածախս: Հաջորդ ամիսների կամ տարիների սպասարկման միջնորդավճարները գանձվում են յուրաքանչյուր ամսվա առաջին աշխատանքային օրը (եթե քարտի համար սահմանված է ամսական սպասարկման միջնորդավճար), կամ քարտի տրամադրման ամսվան հաջորդող յուրաքանչյուր 13-րդ ամսվա առաջին աշխատանքային օրը (եթե քարտի համար սահմանված է տարեկան սպասարկման միջնորդավճար): Ընդ որում, եթե Քարտի գործողության ժամկետը դադարեցվում է սահմանված ժամկետից շուտ, ապա նախապես վճարված Հաշվի սպասարկման միջնորդավճարը ենթակա չէ վերադարձման:

**5.5.** Քարտապանի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա Քարտի գործողության ժամանակավորապես կասեցումը (բլոկավորումը) չի դադարեցնում Քարտի գործողությունը, ինչպես նաև Հաշվի սպասարկման միջնորդավճարի գանձումը:

**5.6.** Քարտապանի կողմից Քարտի գործողության դադարեցման համար Բանկ գրավոր կամ բանավոր դիմելուց անմիջապես հետո Բանկն իրականացնում է Քարտի բլոկավորում, իսկ Քարտը և/կամ Հաշիվը փակվում են Քարտապանի գրավոր դիմումի հիման վրա Քարտով նախկինում կատարված բոլոր գործառնությունները Հաշվով ձևակերպելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ պայմանով, որ Հաշվի մնացորդը բավարարում է Քարտով կատարված գործառնությունները ձևակերպելու և դրանց համար Սակագներով նախատեսված միջնորդավճարները գանձելու համար: Ընդ որում, Քարտի գործողության դադարեցման դիմում ներկայացնելիս Քարտը Բանկ հետ չվերադարձնելու դեպքում Քարտապանը լրիվ ֆինանսական պատասխանատվություն է կրում Քարտի գործողության դադարեցումից հետո մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը Քարտով կատարված հավաստագրում (գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների համար: Քարտի փակումը



հնարավոր է իրականացնել միայն բոլոր դրամային պարտավորությունները (Չաշվի սպասարկման միջնորդավճարը, գերածախսի և դրա տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, գերածախսի տոկոսները, գերածախսի գումարը, վարկային գծի գումարի և տոկոսների նկատմամբ հաշվարկված տուժանքը, ժամկետանց տոկոսները, ժամկետանց վարկային գծի գումարը, տոկոսները և վարկային գծի գումարը) կատարելուց հետո:

**5.7.** Բանկը Սակագներով սահմանված չափով Քարտի գործողության ընթացքում Չաշվի մնացորդի նկատմամբ հաշվարկում և վճարում է տոկոսագումարներ: Ընդ որում, տոկոսագումարների հաշվարկը կատարվում է օրական՝ սկսած Չաշվին դրամական միջոցների մուտքագրման օրվան հաջորդող օրվանից:

**5.8.** Յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված տոկոսագումարները վճարվում են Չաշվին՝ այդ ամսվա վերջին աշխատանքային օրը: Տոկոսագումարի հաշվարկը դադարեցվում է Քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-ին (տասնչորսին), իսկ եթե այդ օրը ոչ աշխատանքային է՝ հաջորդող առաջին աշխատանքային օրը, ընդ որում, առ տվյալ օրը կուտակված տոկոսագումարները վճարվում են Չաշվին:

**5.9.** Եթե Քարտապանի Չաշվի արժույթը տարբեր է ՀՀ դրամից, ապա հաշվարկված տոկոսագումարները վճարվում են Քարտապանի ՀՀ դրամային ընթացիկ հաշվին, իսկ արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է տվյալ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

**5.10.** Եթե Քարտապանի Չաշվի արժույթը տարբեր է ՀՀ դրամից և Քարտապանը Քարտի գործողության ժամկետի ընթացքում դիմում է Բանկ Քարտի գործողության դադարեցման նպատակով, և առկա է Քարտի դրական մնացորդի դիմաց կուտակված տոկոսագումար, ապա այն վճարվում է Քարտապանի ՀՀ դրամային ընթացիկ հաշվին, իսկ արտարժույթի առքն ու վաճառքը կատարվում է նախորդ



օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժուքային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

**5.11.** Արտարժուքային քարտերի սպասարկման դեպքում Քարտապանի անունով բացվում է ՀՀ դրամային ընթացիկ հաշիվ:

**5.12.** Քարտի վերաթողարկման մասին որոշումը կայացվում է Բանկի կողմից՝ հիմք ընդունելով Քարտով կատարված գործառնությունների ծավալը, Քարտի սպասարկման միջնորդավճարի վճարումները և Հաշվին առկա միջոցները, իսկ վարկային գիծ ունեցող քարտերի դեպքում՝ նաև ժամկետանց օրերի քանակը:

**5.13.** Հղումով փոխանցում (LinkPay) ծառայության միջոցով կատարված գործարքների, քարտից քարտ կատարված գործարքների և հաշվին կատարված այլ մուտքերի գծով զեղծարարության, դրա կասկածի և/կամ կատարված գործարքների բողոքարկման ստացման դեպքում Հաշվին տվյալ ծառայության միջոցով մուտքագրված դրամական միջոցների տնօրինումը Բանկի կողմից կարող է սահմանափակվել և/կամ դրանք կարող են անակցեպտ գանձվել Հաշվից, իսկ դրանում միջոցների անբավարարության դեպքում՝ Քարտապանի այլ հաշիվներից, այդ թվում՝ ավանդային: Ընդ որում, անակցեպտ գանձումը կատարվում է Հաշվի արժույթով հաշիվներից, իսկ դրանցում միջոցների անբավարարության դեպքում՝ այլ արժույթով հաշիվներից՝ կատարելով արտարժույթի փոխարկում տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով: Քարտապանի՝ Բանկում առկա բոլոր հաշիվներին զումարի անբավարարության դեպքում Բանկը կարող է պահանջել Քարտապանից տասնօրյա ժամկետում Բանկին վճարել հղումով փոխանցում (LinkPay) ծառայության միջոցով ստացված դրամական միջոցները:



## 6 ԱՐԺՈՒՅԹԻ ՓՈԽԱՐԿՈՒՄԸ

**6.1.** Քարտապանը Քարտով կարող է իրականացնել գործառնություններ՝ Հաշվի արժույթից տարբերվող արժույթով՝ օրենքով և Պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով:

**6.2. Գործառնության կատարման պահին** գործառնության գումարը փոխարկվում է Հաշվի արժույթի՝ հինք ընդունելով գործառնության կատարման պահին Visa կամ Mastercard վճարային համակարգերի կողմից սահմանված փոխարժեքը և/կամ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժույթային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքը՝ առքի կամ վաճառքի համար համապատասխանաբար նվազեցնելով կամ ավելացնելով Պրոցեսինգային կենտրոնի կողմից սահմանված տոկոսադրույքը:

**6.3. Գործառնության մշակման պահին** Գործառնության գումարը փոխարկվում է Հաշվի արժույթի հետևյալ կարգով.

6.3.1. Պրոցեսինգային կենտրոնի միջոցով քարտերի սպասարկումն իրականացնող բանկերի սպասարկման ցանցում գործառնություններ իրականացնելիս, ինչպես նաև այլ բանկերի սպասարկման ցանցում Visa վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարով և եվրո արժույթով, իսկ Mastercard վճարային համակարգերի քարտերով ԱՄՆ դոլարով գործառնություններ իրականացնելիս, գործառնությունների գումարը անհրաժեշտության դեպքում փոխարկվում է Հաշվի արժույթի սույն պայմանների 6.3.5 կետում սահմանված կարգով:

6.3.2. Այլ բանկերի սպասարկման ցանցում Visa վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարից և եվրո արժույթից տարբեր



արժույթներով կատարված գործառնությունների գումարը Visa վճարային համակարգի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի գործառնության կատարման պահին Visa վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի արժույթի Պայմանների 6.3.5 կետում սահմանված կարգով: Գործառնության գումարը ԱՄՆ դոլարի փոխարկելու համար գանձվում է միջնորդավճար՝ գործառնության գումարի 2 (երկու) տոկոսի չափով:

6.3.3. Այլ բանկերի սպասարկման ցանցում Mastercard վճարային համակարգի քարտերով ԱՄՆ դոլարից տարբեր արժույթով կատարված գործառնությունների գումարը Mastercard վճարային համակարգի կողմից փոխարկվում է ԱՄՆ դոլարի գործառնության կատարման պահին Mastercard վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի արժույթի Պայմանների 6.3.5 կետում սահմանված կարգով, բացառությամբ եվրո արժույթով քարտերով եվրո արժույթով գործառնությունների, որի դեպքում Քարտից գանձվում է գործառնության գումարը:

6.3.4. Այլ բանկերի սպասարկման ցանցում ArCa «ՄԻՐ» քարտերով ՌԴ ռուբլի արժույթով կատարված գործառնությունների գումարը «ՄԻՐ» ռուսական վճարային համակարգի կողմից փոխարկվում է ՀՀ դրամի գործառնության մշակման օրվա դրությամբ ՄԻՐ վճարային համակարգի կողմից սահմանված փոխարժեքով և, անհրաժեշտության դեպքում, փոխարկվում է Հաշվի արժույթի Պայմանների 6.3.5 կետում սահմանված կարգով:

6.3.5. Պայմանների 6.3.1, 6.3.2, 6.3.3 և 6.3.4 կետերով նկարագրված դեպքերում փոխարկումը Հաշվի արժույթի ՀՀ դրամային արժույթով քարտերի դեպքում կատարվում է գործառնությունը Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ Բանկի կողմից քարտային գործառնությունների ձևակերպման համար սահմանված վերջին փոխարժեքով: ԱՄՆ դոլար կամ եվրո արժույթով քարտերի դեպքում փոխարկումը կատարվում է տարանցիկ փոխարժեքով,



որը հաշվարկվում է գործառնությունը Պրոցեսինգային կենտրոնում մշակելու օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակվող արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքի միջոցով: Քարտապանի Հաշվին ձևակերպվում է գործառնության մշակման արդյունքում փոխարկված և հաշվարկված գումարը:

**6.4.** Գործառնության կատարման և գործառնության մշակման օրերին կիրառվող արտարժույթի փոխարժեքի և փոխարկման կարգի տարբերության հետևանքով Հաշվով ձևակերպված գործառնության գումարը տարբերվում է գործառնության կատարման պահին Քարտից գանձված գումարից:

**6.9.** Արտարժութային քարտերի համար Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարները գանձվում են ձևակերպման պահին ՀՀ ԿԲ կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին շուկայական փոխարժեքով:

**6.10.** ՀՀ տարածքում բանկոմատների միջոցով իրականացվող քարտից քարտ փոխանցումները կատարվում են ՀՀ դրամ արժույթով՝ անկախ Հաշվի արժույթից: Ընդ որում, ՀՀ դրամ արժույթից տարբեր արժույթով Քարտերով կատարված քարտից քարտ փոխանցումները և/կամ ՀՀ դրամ արժույթից տարբեր արժույթով Քարտերին ստացված քարտից քարտ փոխանցումների գումարները փոխարկվում են Հաշվի արժույթի՝ համաձայն Պայմանների 6.2 և 6.7 կետերի:



## 7 ՀԱՇԻՎԸ ՎԱՐԿԱՎՈՐԵԼԸ

**7.1.** Այն դեպքերում, երբ Բանկը վճարում է Հաշվից, չնայած դրանում դրամական միջոցների բացակայությանը կամ անբավարարությանը (գերածախս), Բանկը նման վճար կատարելու օրվանից համարվում է Քարտապանին համապատասխան գումարով վարկ տրամադրած:

**7.2.** Քարտապանին կարող է տրամադրվել ժամանակավոր օվերդրաֆտ՝ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և պայմաններով: Ընդ որում, ժամանակավոր օվերդրաֆտի հնարավորությունը տրամադրվում է առավելագույնը 14 (տասնչորս) օրացուցային օրով և ենթակա է նարման ժամանակավոր օվերդրաֆտի տրամադրումից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում:

**7.3.** Գերածախսը պարտավորություն է, որն առաջանում է Քարտով գործառնություն կատարելու արդյունքում՝ հանգեցնելով Քարտի մնացորդի գերազանցմանը:

**7.4.** Գերածախս կարող է առաջանալ, օրինակ, հետևյալ դեպքերում՝

7.4.1. եթե գործառնության կատարման համար Բանկից չի պահանջվել հավաստագրում (գործառնության կատարման իրավասության ստուգում), և գործառնության գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

7.4.2. Քարտով կատարված գործառնության դիմաց Սակագներով սահմանված գանձման ենթակա միջնորդավճարի գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,



7.4.3. Քարտապանը օգտագործել է Բանկի կողմից տրամադրված ժամանակավոր օվերդրաֆտը և սահմանված ժամկետում չի մարել այն,

7.4.4. եթե Քարտին ստացված կրեդիտային գործարքը ավելի ուշ է ձևակերպվել Հաշվին, քան Քարտապանի կողմից այդ կրեդիտային գործարքի գումարի օգտագործման գործարքը, և գործառնության գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը,

7.4.5. Հաշվի արժույթից տարբերվող արժույթով գործառնության կատարման և տվյալ գործառնության մշակման օրերին կիրառվող արտարժույթի փոխարժեքի տարբերության հաշվին,

7.4.6. եթե համապատասխան վճարային համակարգի կողմից սահմանված ժամկետներում գործարքի առաջին ներկայացումը չստանալու հետևանքով Քարտին վերականգնված գործարքի գումարը կամ տեխնիկական այլ պատճառներով Քարտին սխալմամբ մուտքագրված գումարը օգտագործվում է Քարտապանի կողմից,

7.4.7. Բանկի անհասանելի լինելու դեպքում Բանկի կողմից նախապես սահմանված արժեքների սահմաններում վճարային համակարգի կողմից գործարքի հավաստագրման արդյունքում գործառնության գումարը գերազանցել է Քարտի մնացորդը,

7.4.8. եթե Քարտով կատարված գործառնությունը Բանկում չի ձևակերպվել, և Հաշվին առկա մնացորդը կամ դրա մի մասը արգելադրվել/բռնագանձվել է դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից,

7.4.9. եթե ոչ աշխատանքային ժամերին և օրերին Քարտին մուտքագրվող միջոցների ակտիվացումից հետո Քարտապանն ամբողջությամբ կամ մասամբ օգտագործել է դրանք և այդ գործառնությունները Բանկում դեռ չեն ձևակերպվել, իսկ ձևակերպման պահին գանձման ենթակա միջոցորդավճարները և/կամ կուտակված տոկոսագումարը գերազանցել են Հաշվի մնացորդը,

7.4.10. եթե մինչև Քարտով կատարված գործառնությունների Բանկում ձևակերպվելը Հաշվին առկա մնացորդը կամ դրա մի մասը Քարտապանի կողմից կամ իր հանձնարարականի հիման վրա ելքագրվել է Հաշվից և գործառնությունների ձևակերպման պահին գործառնությունների գումարը գերազանցել է Հաշվի մնացորդը:



**7.5.** Հաշվի գերաժախսի ձևակերպման օրվանից կատարվում է Սակագներով սահմանված չափի տոկոսագումարների հաշվարկ՝ օրական կտրվածքով:

**7.6.** Քարտապանը պարտավոր է Բանկի առաջին իսկ պահանջով կամ մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտին հաջորդող ամսվա 14-րդ օրը, իսկ եթե այդ օրը ոչ աշխատանքային է՝ հաջորդող առաջին աշխատանքային օրը մարել Հաշվին առաջացած գերաժախսի գումարը, դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարը և Հաշվի սպասարկման միջնորդավճարը:

**7.7.** Եթե Քարտապանը Բանկի հանդեպ ունի մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը կատարման ենթակա Պայմանագրից բխող դրամային պարտավորություն, գործառնական օրվա ավարտից հետո Բանկն իրավունք է ստանում գանձել պարտքի (այդ թվում՝ տուժանքի, տոկոսների, գերաժախսի, վարկի, սպասարկման միջնորդավճարի) գումարը Քարտապանի՝ Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից՝ բանկային հաշիվներում դրամական միջոցների առկայության դեպքում՝ վեց ամսվա ընթացքում, իսկ բանկային հաշիվներում դրամական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում՝ դրամական միջոցների յուրաքանչյուր մուտքագրումից հետո վեց ամսվա ընթացքում:

**7.8.** Առաջացած գերաժախսի, իսկ առկայության դեպքում վարկի գումարը գանձվում է Հաշվի արժույթով հաշիվներից, իսկ տուժանքը, տոկոսները՝ ՀՀ դրամով հաշիվներից: Եթե համապատասխան հաշիվներում բացակայում է անհրաժեշտ գումարը, այն գանձվում է Քարտապանի այլ բանկային հաշիվներից: Այդ պարագայում արտարժույթի առքն ու վաճառքը առաջացած գերաժախսի, իսկ առկայության դեպքում վարկի գումարի գանձման դեպքում կատարվում է տվյալ օրվա համար Բանկի սահմանած փոխարժեքով, իսկ տուժանքի, տոկոսների և սպասարկման միջնորդավճարի գանձման դեպքում՝ նախորդ օրվա համար ՀՀ ԿԲ կողմից սահմանած միջին շուկայական փոխարժեքով:



## 8 ԱՌԱՆՑ ՀԱՇՎԻ ԲԱՑՄԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ ՔԱՐՏԱՊԱՆԻ ՔԱՐՏԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ՓՈԽԱՆՑԵԼԸ

**8.1.** Քարտապանի անունով ստացված առանց հաշվի բացման դրամական միջոցները կարող են Քարտապանի կողմից տրված վճարման հանձնարարականի հիման վրա փոխանցվել Քարտապանի Հաշվին:

**8.2.** Քարտապանը վճարման հանձնարարականը ներկայացնում է Բանկ հեռախոսազանգի միջոցով՝ Բանկի պատասխանատու աշխատակցին հայտնելով իր անունը, ազգանունը, Քարտի համարը, Քարտի գաղտնաբառը և փոխանցման նույնականացման համարը:

**8.3.** Բանկի պատասխանատու աշխատակիցը իրավունք ունի հեռախոսազանգի պատկանելության հավաստիության ապահովման և դրանում տեղ գտած սխալների բացահայտման նպատակով Քարտապանից հարցնել լրացուցիչ տեղեկատվություն՝ փոխանցողի անունը, ազգանունը, գումարի չափը և այլն:

**8.4.** Հեռախոսազանգը պետք է կատարվի Բանկի **(+374 10) 31 88 88** հեռախոսահամարին:

**8.5.** Բանկը պարտավորվում է մինչև հեռախոսազանգը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը դրամական միջոցներն ուղղել Քարտապանի Հաշվին:

**8.6.** Բանկը պարտավորվում է չկատարել վճարման հանձնարարականը, եթե Քարտապանի կողմից ներկայացվել է սխալ նույնականացման համար, կամ, եթե վճարման հանձնարարականը չի համապատասխանում Պայմանների 8.2, 8.3 և 8.4 կետերի պահանջներին:

**8.7.** Այն դեպքում, երբ փոխանցված գումարի արժույթն այլ է, քան Քարտապանի Հաշվի արժույթը՝ դրամական միջոցները Քարտապանի հեռախոսազանգի ընդունման պահին Բանկի կողմից սահմանված փոխարժեքով փոխարկվում և փոխանցվում է Քարտապանի հաշվեհամարին:



## 9 ՔԱՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

9.1. Երրորդ անձանց կողմից Քարտի անօրինական օգտագործումից խուսափելու նպատակով Քարտապանը պարտավորվում է խստորեն պահպանել հետևյալ կանոնները.

9.1.1. Քարտը ստանալիս անհապաղ ստորագրել Քարտի հետնամասում Քարտապանի ստորագրության համար նախատեսված հատուկ դաշտում,

9.1.2. ապահովել Քարտի տվյալների և ՊԻՆ-կոդի գաղտնիությունը, ինչի համար խորհուրդ է տրվում ոչնչացնել ՊԻՆ-կոդը պարունակող ստացականը (առկայության դեպքում), ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները Քարտի տվյալների և/կամ ՊԻՆ-կոդի անհասանելիությունն այլ անձանցից կամ նկարահանող սարքերից ապահովելու համար, չգրել ՊԻՆ-կոդը Քարտի վրա, հեռախոսի ու համակարգչի մեջ և չպահել այն Քարտի հետ միասին կամ երրորդ անձանց համար այլ հասանելի վայրում, Քարտը և ՊԻՆ-կոդը չտրամադրել այլ անձանց, այդ թվում՝ Բանկի աշխատակիցներին,

9.1.3. ապահովել Բանկում գրանցված գաղտնաբառի գաղտնիությունը,

9.1.4. ապահովել Բանկում գրանցված էլեկտրոնային հասցեի գաղտնաբառի գաղտնիությունը,

9.1.5. ապահովել Քարտի իսկությունը ստուգող կոդի գաղտնիությունը,

9.1.6. ապահովել Քարտապանի կողմից տրամադրված հեռախոսահամարին ուղարկված 3D Secure անվտանգության կոդի գաղտնիությունը,



9.1.7. Քարտով գործառնություն իրականացնելիս ուշադիր զննել կտրոնում նշված գումարի ճշտությունը և որից հետո միայն ստորագրել այն,

9.1.8. ինտերնետում վճարում կատարելիս օգտվել միայն այն կայքերից, որոնց հասցեները սկսվում են «https» հապավումով կամ ունեն «Secure Sockets Layer (SSL)» կրիպտոգրաֆիկ արարողակարգ:

**9.2.** Քարտի կորստի կամ գողության դեպքում, Քարտապանը պարտավորվում է.

9.2.1. «ACBA DIGITAL» ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով իրականացնել Քարտի բլոկավորում կամ Քարտը բլոկավորելու համար անհապաղ ներկայանալ Բանկի մոտակա մասնաճյուղ Քարտի բլոկավորման դիմում ներկայացնելու համար կամ զանգահարել **(+374 10) 31 88 99** կամ **(+374 10) 31 88 88** կամ **(+374 10) 59 22 22** հեռախոսահամարներին,

9.2.2. Քարտի փոխարինման կամ փակման համար Քարտը բլոկավորելուց հետո 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում դիմել Բանկ,

9.2.3. կորած Քարտը գտնելու դեպքում այն վերադարձնել Բանկ:

**9.3.** Բանկն իրավունք ունի առանց Քարտապանին տեղեկացնելու բլոկավորել Քարտապանի Քարտը՝ զեղծարար գործարքների իրականացման վտանգի, զեղծարարության կասկածի դեպքերում: Քարտը կարող է ապաբլոկավորվել միայն զեղծարարության կասկածի վերացման կամ այն դեպքում, եթե Քարտապանը բանավոր կամ գրավոր հաստատում է տվյալ գործարքների իր կողմից կատարված լինելը:

**9.4.** Քարտապանի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա Բանկը կարող է տեղեկացնել Քարտապանին Քարտով գործառնությունների (ներառյալ այն գործառնությունների, երբ կատարվել է գործարքի բողոքարկում, հետվճար կամ այլ այնպիսի գործարք,



որի արդյունքում գործարքի գումարը հետ է վերադարձվել Հաշվին) վերաբերյալ Բանկում գրանցված հիմնական բջջային հեռախոսահամարին SMS հաղորդագրություններ ուղարկելու միջոցով, որի դիմաց Բանկը Քարտապանի Հաշվից գանձում է Բանկի Սակագներով սահմանված միջնորդավճարը: Հաշվին անհրաժեշտ միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում միջնորդավճարը գանձվում է չօգտագործված վարկային գծի (առկայության դեպքում) գումարից: Չօգտագործված վարկային գծի բացակայության կամ անբավարարության դեպքում միջնորդավճարի գումարը հաշվառվում է որպես գերածախս:

**9.5.** SMS հաղորդագրությունները Քարտապանին ուղարկվում են հայերեն լեզվով, եթե Բանկի կողմից առաջարկվող տարբերակներից Քարտապանը հաղորդակցման այլ լեզու չի ընտրել և քարտապանի կողմից ընտրված գումարային շեմից բարձր գումարի գործարքների համար: Ընդ որում՝ Բանկի կողմից Սակագներով սահմանված միջնորդավճարներ կամ այլ գանձումներ իրականացնելիս կիրառվում է Բանկի կողմից սահմանված միասնական նվազագույն շեմը, որը դրամային քարտերի դեպքում սահմանված է 200 ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար արժույթով քարտերի դեպքում՝ 1 ԱՄՆ դոլար և եվրո արժույթով քարտերի դեպքում՝ 1 եվրո:

**9.6.** Այն դեպքում, երբ Քարտապանին տեղեկացվում է կատարված գործարքի գումարը Հաշվին հետ վերադարձվելու (ապաստանեցնելու) մասին կամ Բանկի կողմից նախահաստատված մերժման կողերով մերժված գործարքների համար SMS հաղորդագրությունների ուղարկման դեպքում Քարտապանի կողմից ընտրված նվազագույն շեմը չի կիրառվում:

**9.7.** Քարտապանը պարտավորվում է չձևափոխել և չվնասել Քարտը:



## 10 ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**10.1.** Քարտապանը լրիվ ֆինանսական պատասխանատվություն է կրում.

10.1.1. Քարտի կորստի, Քարտի կամ Քարտի տվյալների գողության դեպքում Քարտով կատարված գործառնությունների համար մինչև Բանկին Քարտի կորստի, Քարտի կամ Քարտի տվյալների գողության մասին հայտնելը, բացառությամբ հավաստագրում (գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների, որոնց համար լրիվ ֆինանսական պատասխանատվությունը կրում է Քարտապանը, եթե Քարտի տվյալների գողության մասին Բանկ հայտնելու ժամանակ Քարտը Բանկ հետ չի վերադարձվում Քարտապանի կողմից,

10.1.2. Քարտապանի կողմից Քարտի գործողության դադարեցման դիմումի ներկայացման պահին Քարտը Բանկ հետ չվերադարձնելու դեպքում, Քարտի գործողության դադարեցումից հետո մինչև Քարտի գործողության ժամկետի ավարտը Քարտով կատարված հավաստագրում (գործառնության կատարման իրավասության ստուգում) չպահանջող գործարքների համար,

**10.2.** Բանկը պատասխանատվություն չի կրում.

**ա)** ուշացված, սխալ կամ չիրականացված գործառնությունների համար, որոնք առաջացել են առևտրի և սպասարկման կետերի կամ Վճարային համակարգի մեղքով կամ տեխնիկական պատճառներով, որոնք Բանկի ողջամիտ հսկողությունից դուրս են եղել,  
**բ)** Բանկին չպատկանող միջոցներով իրականացված կանխիկացման կամ վճարման գործառնությունների ձախողման համար, եթե Բանկը ձախողման մեջ չի ունեցել մեղավորություն,



- գ)** Քարտի կամ Քարտի տվյալների միջոցով իրականացված անօրինական գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,
- դ)** միկրոարոցեսորային (չիպային) քարտով ՊԻՆ կոդի միջոցով իրականացված գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,
- ե)** անհպում տեխնոլոգիայով իրականացված գործարքների համար, որոնք կատարվել են տվյալ վճարային համակարգի կանոններով ՊԻՆ կոդի մուտքագրում չպահանջող առավելագույն թույլատրելի սահմանաչափի շրջանակում,
- զ)** ինտերնետի միջոցով իրականացված գործառնությունների համար, եթե դա Բանկի կողմից Պայմանագրով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանք չի հանդիսացել,
- է)** այն գործառնությունների համար, որոնք կատարվել են Պայմանագրում սահմանված անվտանգության կանոնների խախտմամբ,
- ը)** Քարտապանի ու առևտրի և սպասարկման կետերի միջև առաջացած վեճերի համար,
- թ)** Հաշվի, ՊԻՆ կոդի, Քարտի համարի, գաղտնաբառի և Քարտի վերաբերյալ այլ տեղեկատվությունը Բանկից անկախ պատճառներով երրորդ անձանց հայտնի դառնալու համար,
- ժ)** ՀՀ և արտասահմանյան բանկերի քարտերին կատարված քարտից քարտ փոխանցումների համար, եթե փոխանցման ժամանակ քարտապանի կողմից մուտքագրվող քարտի համարը կամ հեռախոսահամարը (հեռախոսահամարով փոխանցումների դեպքում) նշվել է սխալ,
- ժա)** Կեղծ հեռախոսազանգի հիման վրա Քարտը բլոկավորելու արդյունքում հասցված վնասների համար,



**ժբ)** Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսի համարին SMS հաղորդագրության տեսքով ուղարկված տեղեկատվության՝ երրորդ անձանց հայտնի դառնալու համար, ինչպես նաև Քարտապանի բջջային հեռախոսի կամ բջջային կապի ծառայություններ մատուցող կազմակերպության տեխնիկական խափանումների հետևանքով Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ Քարտապանի բջջային հեռախոսահամարին Բանկի կողմից ուղարկված SMS հաղորդագրությունը Քարտապանի կողմից չստանալու կամ սխալ բովանդակությամբ ստանալու համար

**10.3.** Բանկն իրավունք ունի միակողմանիորեն բլոկավորել Քարտը՝ Քարտով տրամադրված վարկի կամ Բանկում այլ վարկերի գծով ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում՝ մինչև ժամկետանց պարտավորությունների մարման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը, ինչպես նաև Պայմանագրով սահմանված կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

**10.4.** Քարտատիրոջ անձնական տվյալները և բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրել պետական, այդ թվում՝ դատական և իրավապահ մարմիններին՝ իր իրավունքներն իրացնելու և պարտավորությունները կատարելու նպատակով, և միայն այն անձին ուն անունով բացված է Հաշիվը:

**10.5.** Պայմանների 7.6 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Բանկն իրավունք ունի չմարված գերաժախսի գումարի և դրա նկատմամբ հաշվարկված տոկոսագումարի նկատմամբ հաշվարկել տուժանք, որը ենթակա է վճարման Քարտապանի կողմից: Տուժանքի չափը սահմանվում է Բանկի կողմից միակողմանիորեն, որը չի կարող գերազանցել յուրաքանչյուր օրվա համար 0.13 (զրո ամբողջ տասներեք հարյուրերորդական) տոկոսը:



**10.6.** Պայմանների 7.6 կետով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Քարտապանի վերաբերյալ տեղեկատվությունը ՀՀ օրենսդրությամբ և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով կտրամադրվի ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին և ԱՔՌԱ վարկային բյուրոյին:



# 11 ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՅԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Յուրաքանչյուր ամիս Բանկը Քարտապանին տեղեկացնում է նախորդ ամսվա ընթացքում Քարտով կատարված գործառնությունների վերաբերյալ՝ տրամադրելով նրան Հաշվից քաղվածք:

11.2. Քաղվածքի տրամադրման եղանակը ընտրվում է Քարտապանի կողմից:



## 12 ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

**12.1.** Եթե Քարտապանի կողմից բողոքարկվող գործարքը կանխիկի ստացման գործարք է, ապա այն ենթակա է Բանկի կողմից բավարարման միայն այն դեպքում, եթե տվյալ բանկոմատը կամ կանխիկի տրամադրման կետը սպասարկող բանկն ընդունում է կանխիկ գումարի չտրամադրման փաստը:

**12.2.** Եթե Քարտապանի կողմից բողոքարկվող գործարքը վճարման, ինտերնետի միջոցով իրականացված վճարման կամ Քարտի տվյալների ներկայացմամբ վճարման գործարք է, ապա այն ենթակա է Բանկի կողմից բավարարման, եթե Վճարային համակարգի կանոններով նախատեսված բողոքարկման գործընթացի շրջանակում Բանկը հետ է ստանում բողոքարկվող գործառնության գումարը սպասարկող բանկից:

**12.3.** Եթե Բանկը Քարտը սպասարկող վճարային համակարգի կանոններով նախատեսված բողոքարկման գործընթացի շրջանակում որոշում է կայացնում չչարունակել բողոքարկման գործընթացը, սակայն Քարտապանը ցանկանում է դիմել բողոքարկման գործընթացի վերջին փուլին՝ տվյալ Վճարային համակարգի արբիտրաժային կոմիտեին, ապա արբիտրաժային կոմիտեին դիմելու համար սահմանված միջնորդավճարները, ինչպես նաև Վճարային համակարգի կողմից հոգուտ մյուս կողմի որոշում կայացնելու դեպքում Բանկի կրած ծախսերը փոխհատուցվում են Քարտապանի կողմից:

**12.4.** «Արմենիան Քարդ» վճարային համակարգի անդամ բանկերի սպասարկման ցանցում կատարված գործառնության բողոքարկման դեպքում բողոքարկվող գործարքի գումարը մուտքագրվում է քարտապանի հաշվին Բանկում գործարքի ձևակերպման օրը:



Ընդ որում՝ քարտային հաշվին Բանկի կողմից բողոքարկվող գումարի մուտքագրումից հետո, սպասարկող բանկը կարող է մերժել բողոքարկումը՝ վճարային համակարգի կանոններով սահմանված կարգով, որի դեպքում Բանկում գործարքի ձևակերպման օրը Բանկն առանց Քարտապանի կողմից լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու բողոքարկվող գործարքի գումարը անակցեպտ կարգով գանձում է Քարտապանի համապատասխան հաշվից:

**12.5.** Քարտապանն իրավունք ունի բողոքարկել իր Քարտով կատարված գործառնությունը վերջինիս կատարման օրվանից 55 (հիսունհինգ) օրացուցային օրվա ընթացքում:

**12.6.** Բանկը դիմումի ներկայացման օրվանից առավելագույնը 90 (իննսուն) օրացուցային օրվա ընթացքում Քարտապանին ներկայացնում է հիմնավոր պատասխան:

**12.7.** ՀՀ և արտասահմանյան բանկերի կողմից թողարկված քարտերին կատարված քարտից քարտ փոխանցումները բողոքարկման ենթակա չեն:



# 13 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**13.1.** Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխություններ և լրացումներ կատարել Սակագներում և Պայմաններում՝ փոփոխությունների և լրացումների ուժի մեջ մտնելուց 15 օր առաջ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության ստացման համար Քարտապանի կողմից ընտրված եղանակով ծանուցելով վերջինիս:

**13.2.** Բանկն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրով սահմանված կարգով Քարտապանին ծանուցելով: Քարտային հաշվում դրամական միջոցների առկայության դեպքում, Բանկը դրանք փոխանցում է Բանկի համապատասխան հաշվապահական հաշվին Քարտապանի կողմից այդ դրամական միջոցների ստացման նպատակով:

**13.3.** Քարտապանն իրավունք ունի Պայմանագրից բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը չի գերազանցում 500 000 ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

**13.4.** Քարտապանը պարտավորվում է Քարտի ստացման դիմումում ներկայացված տվյալների (անձնագրային տվյալներ, հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցե և այլն), ինչպես նաև վարկային գծի (առկայության դեպքում) ստացման համար ներկայացված փաստաթղթերում և նշված տեղեկատվության փոփոխության դեպքում 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում տեղյակ պահել Բանկին գրավոր կամ **(010) 31 88 88** կամ **(010) 31 88 99** հեռախոսահամարներով Բանկի շուրջօրյա սպասարկման հեռախոսային կենտրոն զանգահարելու միջոցով:



# 14 ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**14.1.** Քարտապանը, ստորագրելով վճարային քարտի դիմումը, ծանուցվում և տալիս է իր համաձայնությունը, որ.

- Բանկը հարցում կատարի «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամին, և վերջինիս տրամադրի իր վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, որը կարող է կիրառվել Բանկի կողմից:

- Սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքերի վերաբերյալ Բանկը հարցում կատարի ՀՀ կադաստրի կոմիտե և ստանա սպառիչ տեղեկատվություն իր գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև կադաստրային գործից ստանա սեփականության իրավունքի վկայականի, հատակագծի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, իր անունից դիմում ներկայացնի ՀՀ կադաստրի կոմիտե, կատարի անշարժ գույքի նկատմամբ ցանկացած իրավունքի պետական գրանցում, ստանա փաստաթղթեր, կատարի վճարումներ՝ մինչև իր վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

- Սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցների վերաբերյալ Բանկը հարցում կատարի ՀՀ ճանապարհային ոստիկանություն և ստանա սպառիչ տեղեկատվություն տրանսպորտային միջոցների նկատմամբ իր գույքային իրավունքների, այդ թվում՝ դրանց ծագման հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև ստանա սեփականության իրավունքի վկայականի և այլ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ մինչև իր վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:



- Բանկը հարցում կատարի «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ-ին և ապահովագրական ընկերությունների և ստանա ցանկացած տեղեկատվություն սեփականության իրավունքով իրեն պատկանող տրանսպորտային միջոցների ապահովագրության վերաբերյալ (այդ թվում՝ ապահովագրի և շահառուների վերաբերյալ տեղեկություններ)՝ մինչև իր վարկային (փոխառության և այլն) պարտավորության լրիվ կատարումը:

- Բանկի կողմից իրեն ուղարկվեն ծանուցումներ՝ Բանկի կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված ցանկացած տեղեկատվության վերաբերյալ:

- «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և Պայմանագրի հիման վրա՝ Բանկը առավելագույնը 50 տարվա ընթացքում հարցումներ կատարի «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ), ստանա նշված անձնական տվյալները և դրանք ներառի Բանկի համապատասխան տեղեկատվական բազաներում՝ **ՀՀ Ոստիկանության բնակչության պետական ռեգիստրից**՝ անձը հաստատող փաստաթղթի կամ ՀԾՀ/հրաժարման տեղեկանքի տվյալներ և դրանց պատմություն, կարգավիճակ, քաղաքացիություն, մահվան օր, ամիս, տարի, մշտական բնակության վայր, լուսանկար, **ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունից**՝ ծննդի, ամուսնության, ամուսնալուծության, որդեգրման, հայրության որոշման, անվան փոխման, մահվան պետական գրանցման տվյալներ, **ՀՀ Ճանապարհային ոստիկանությունից**՝ տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի, տրանսպորտային միջոցի օտարման սահմանափակումների, տրանսպորտային միջոցի սեփականության, գրավի և լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքների ծագման, փոփոխման, դադարման վերաբերյալ տվյալներ, ԱՊՊԱ պայմանագրի վերաբերյալ տվյալներ, **ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրից**՝ իրավաբանական անձանց ստեղծման,



վերակազմակերպման, լուծարման պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման վերաբերյալ տվյալներ, **ՀՀ Արդարադատության նախարարության հարկադիր կատարման ծառայությունից՝** ցանկացած տեսակի սահմանափակումներ, դրանց ամբողջական պատմություն, ներառյալ՝ արգելանքի վերաբերյալ դատարանի որոշման և կատարողական թերթի վերաբերյալ տվյալներ, **ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից՝** աշխատանքային պայմանագրի և աշխատավարձի վերաբերյալ տվյալներ, քաղվածք անձնական հաշվի քարտի վերաբերյալ՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ, դեբետային գումարներ, միասնական հաշվում առկա գումարներ և այլն, գործունեության և կարգավիճակի մասին տեղեկատվություն, բոլոր տեսակի հաշվետվությունների վերաբերյալ տվյալներ, **ՀՀ կադաստրի կոմիտեից՝** գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տվյալներ: Նշված տեղեկությունները օգտագործվելու, ուսումնասիրվելու և վերլուծվելու են Քարտապանի ներգրավմամբ ցանկացած բիզնես գործընթացում հետևյալ նպատակներով՝ Քարտապանի անձնական տվյալների վերաբերյալ ստույգ տվյալների ստացում, առավել պատշաճ նույնականացում և տվյալների բազայի ուղղումների իրականացում, սպասարկման ժամանակատարության կրճատում, տեխնիկական սխալների բացառում, գրավադրվող գույքերի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության ստացում: Վերը նշված տվյալները, ինչպես նաև Քարտապանի վերաբերյալ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները կարող են փոխանցվել «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, ՀՀ կենտրոնական բանկին, իրավասու պետական մարմիններին, Քարտապանին դրամական փոխանցումներ կատարող անձանց, այն անձանց, որոնց կանոնադրական կապիտալում Բանկն ունի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն և/կամ այն անձանց, որոնք Բանկի կանոնադրական կապիտալում ունեն ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, ինչպես նաև այն անձանց, որոնց հետ Բանկն իր կողմից մատուցվող ծառայությունների հետ կապված կնքել է համագործակցության/ծառայությունների մատուցման



պայմանագրեր: Համաձայնությունը/անձնական տվյալները կարող են հետ կանչվել, ուղղվել, ոչնչացվել, իսկ տվյալների մշակումը՝ դադարեցվել ցանկացած ժամանակ՝ Քարտապանի գրավոր դիմումի հիման վրա, եթե Քարտապանը տվյալ պահին չի օգտվում, ինչպես նաև ներգրավված չէ Բանկի կողմից մատուցվող որևէ ծառայությունում, և եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

- Բանկը Քարտապանի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները և անձնական տվյալները փոխանցի Քարտի հետ տրամադրվող լրացուցիչ ծառայություններ մատուցող կազմակերպություններին՝ նշված ծառայություններից օգտվելու դեպքում Քարտապանի նույնականացման նպատակով:



# 15 ԾԱՆՈՒՑՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

## ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Խնդրում ենք մինչև վճարային քարտի դիմումը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին: Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը** (այսուհետև՝ Հիմնադրամ): Հիմնադրամի գտնվելու վայրը՝

ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6,  
Հեռախոսը՝ /+374 10/ 58-35-14,  
Ինտերնետային կայքը՝ [www.adgf.am](http://www.adgf.am),

Սույն ծանուցման մեջ կիրառվող սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի սահմանումներին:



## Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ
2. եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետ՝ անվճարունակ բանկ):

## Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժութային ավանդները համարվում են մեկ արտարժութային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Այն դեպքում, երբ բանկի նկատմամբ Ձեր բանկային ավանդը ձևավորվել է բանկի՝ մեկ կամ մի քանի բանկերի միացման արդյունքում, ապա յուրաքանչյուր միացող բանկում Ձեր ունեցած բանկային ավանդը դիտվում է որպես առանձին բանկային ավանդ՝ Օրենքով սահմանված կարգով:



## Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ԶԶ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	<b>16 միլիոն ԶԶ դրամ</b>	<b>7 միլիոն ԶԶ դրամ</b>	<b>մինչև 16 միլիոն ԶԶ դրամ</b> (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	<b>7 միլիոն ԶԶ դրամ</b> (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ԶԶ դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և միևնույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք խնդրահարույց պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և խնդրահարույց պարտավորության դրական տարբերության հիման վրա: Խնդրահարույց



պարտավորություն է համարվում Ձեր այն պարտավորությունը, որի հիմնական գումարի (կամ դրա մի մասի) մարումը կամ տոկոսների վճարումն ուշացրել էք պայմանագրում նշված ժամկետից 90 օրից ավելի:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժութային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

### **Չերաշխավորված բանկային ավանդ**

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

- ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
- գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,



- դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,
- ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույքն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույքով,
- զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

### **Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները**

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրվանից սկսած Հիմնադրամը, անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Դուք կարող եք գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր կամ էլեկտրոնային եղանակով պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:



## Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ



*(այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, մշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ)*

չերաշխավորված ավանդ



**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ:** Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին:





«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ

Արամի 82-84, 0002, ք. Երևան, ՀՀ

[www.acba.am](http://www.acba.am) | +374 10 31 88 99